# ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

18.04.2016 13:53

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր «Ապացույցները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով վերապատրաստման դասընթաց:
Դասընթացը վարել է դասախոս, փաստաբան Մարտին Մանուկյանը:
Դասընթացին քննարկվել են ապացույցների նշանակության, թույլատրելիության և վերաբերելիության մասին դասագրքային և գործնականում առկա կանոնները:
Դասընթացավարն անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումների դիտանկյունից քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների կիրառման առանձնահատկություններին:
Փաստաբաններին հետաքրքրել են ապացույցներին առնչվող՝ ՄԻԵԴԻ և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներն ու նախադեպային որոշումները: Քննարկվել է համապատասխան դիրքորոշումներն ու որոշումները պրակտիկայում լայնորեն կիրառելու կարևորությունը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })